ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ. 345-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Էստոնական փող. հ. 12/6 /նախկին 191 մ/մ/ շենքի թվով 8 բնակարանները սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ հետևյալ ընտանիքներին՝

1. Էստոնական փող. հ. 12/6 հ.1 - 53.2քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1821 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Հռիփսիկ Նավասարդյանի ընտանիքին /իրեն, Ռազմիկ Գարսևանի Առաքելյանին, Աշխարհիկ Միսակի Համբարձումյանին, Գայանե Գարսևանի Առաքելյանին/:

2. Էստոնական փող. հ. 12/6 հ.2 - 93.5քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1819 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Պետրոս Նազարի Աբրահամյանի ընտանիքին /իրեն, Արմինե Մինասի Աբրահամյանին, Նազար Մինասի Աբրահամյանին, Քնարիկ Դավիթի Ավետիսյանին, Ալեքս Գոռի Սարգսյանին, Արմեն Պետրոսի Սարգսյանին, Նարինե Պետրոսի Սարգսյանին, Նորայր Գոռի Սարգսյանին և Անի Արթուրի Աբրահամյանին/:

3. Էստոնական փող. հ. 12/6 հ.3 - 28.1քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 24.09.2012թ. հ. 24092012-01-1326 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Քնար Հարությունի Դուշիկյանի ընտանիքին /իրեն, Արտակ Վոլոդյայի Գերաշենկոյին/:

4. Էստոնական փող. հ. 12/6 հ.4 - 32.6քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1817

վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Անուշ Արտավազդի Սարգսյանի ընտանիքին /իրեն, Ալվինա Առաքելյանին, Վլադիմիր Մնացականի Ավագյանին, Աննա Մնացականի Ավագյանին/:

5. Էստոնական փող. հ. 12/6 հ.5 - 32.6քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 24.09.2012թ. հ.24092012-01-1324 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Կարինե Ռազմիկի Մելքոնյանի ընտանիքին /իրեն, Ռոբերտ Սեյրանի Վարդևանյանին/:

6. Էստոնական փող. հ. 12/6 հ.6 - 28.0քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1813 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Հեղինե Էդուարդի Գուրոզլյանին:

7. Էստոնական փող. հ. 12/6 հ.7 - 26.5քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1820 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Ալֆերա Շավարշի Մանուկյանի ընտանիքին /իրեն, Ռաֆայել Ռուբիկի Մանուկյան/:

8. Էստոնական փող. հ. 12/6 հ.8 - 29.3քմ. մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 20.09.2012թ. հ.20092012-01-1822 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Լիա Բագրատի Հարությունյանի ընտանիքին /իրեն, Քրիստինե Ղուկասի Սահակյանին/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Էստոնական փողոց հ. 12/6 շենքի /նախկին 191 մ/մ/ թվով 8 բնակարաններ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ այնտեղ բնակվող ընտանիքներին:

1999թ. Ֆուչիկի փող. հ. 16 4-րդ կարգի վթարային շենքի ապամոնտաժման ժամանակ ինքնակամ բնակարանները զբաղեցրած 8 ընտանիքներ վտարեցին շենքից, որոնց չտրամադրվեց դրամական աջակցության գումարներ: Նրանց ընտանիքները զրկվեցին կացարաններից և մնացին անօթևան:

Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ղեկավարի բանավոր կարգադրությամբ այդ 8 ընտանիքները վերաբնակեցվեցին նախկին 191 մ/մանկապարտեզի 2-րդ մասնաշենքում, նրանց վիճակահանությամբ հանձնվեցին՝ հ. 1 բնակարանը՝ Հռիփսիկ Նավասարդյանի ընտանիքին, հ.2 բնակարանը՝ Պետրոս Նազարի Աբրահամյանի ընտանիքին, հ. 3 բնակարանը՝ Քնար Հարությունի Դուշիկյանի ընտանիքին, հ.4 բնակարանը՝ Անուշ Արտավազդի Սարգսյանի ընտանիքին, հ.5 բնակարանը՝ Կարինե Ռազմիկի Մելքոնյանի ընտանիքին, հ.6 բնակարանը՝ Հեղինե Էդուարդի Գուրջոյանին, հ. 7 բնակարանը՝ Ալֆերա Շավարշի Մանուկյանի ընտանիքին և հ. 8 բնակարանը՝ Լիա Բագրատի Հարությունյանի ընտանիքին: Նրանք փաստացի հաշվառվել և մինչ օրս ապրում են այդ մասնաշենքում, կատարում են պարտադիր նորմերի և աղբահանության համար վճարումներ:

Ըստ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ 15.12.2007թ. թիվ 10.3/219 եզրակացության՝ նախկին 191 մ/մ շենքի 2-րդ մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվել է 3-րդ աստիճանի:

Երևանի քաղաքապետի 20.03.2012թ. հ.2560-Ա որոշման 3-րդ կետով հ.2 հասարակական նշանակության մասնաշենքի գործառական նշանակությունը փոխվել է բնակելիի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրում գրանցվել է թվով 8 առանձնացված բնակարաններ:

Ելնելով վերոգրյալից «Երևան համայնքի սեփականություն համարվող Էստոնական փող. հ. 12/6 շենքի թվով 8 բնակարանների անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ